

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության աճը շարունակում է բավական բարձր մնալ՝ հիմնականում պայմանավորված ոսկերչական գործունեության ազդեցությամբ: 2024թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 15.3%, որը թեև որոշակիորեն ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն գտնվում է բավական բարձր տիրույթում: Այն համադրելի է 2022թ. հունիս-օգոստոս ամիսների աճերին, երբ ՀՀ տնտեսության վրա էապես ազդում էին ՌԴ-ից տեղափոխված ռեյդականտները և ֆինանսական ներհոսքը: Հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ը կազմել է 14.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային¹, %




2024թ. հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.3 և 6.6 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.2 և 0.6 տոկոսային կետով:

Գյուղատնտեսության ոլորտում հունվար-մարտ ամիսների տվյալներով ևս գրանցվել է աճ՝ 3.7%-ի չափով, որի նպաստումը ընդհանուր ՏԱՑ-ին կազմել է 0.3 տոկոսային կետ:


¹ Տնտեսական ակտիվության հունվար և հունվար-փետրվար ամիսների ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-մարտին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում բարձր աճի տեմպերը պահպանվում են՝ պայմանավորված ոսկերչական գործունեությամբ: Արդյունաբերության աճը 2024թ. մարտին կազմել է 33.5%, որն էականորեն բարձր է արդյունաբերության պատմական աճերի համեմատ (2019 և 2021 թվականներին՝ համեմատաբար քիչ շուկային տարիներին, արդյունաբերության ոլորտի SUՑ-ը միջին հաշվով կազմել է 6%): Հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արդյունաբերության աճը կազմել է 30.4%:

Հունվար-փետրվար² ամիսների տվյալներով, արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 47.0% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 27.8 տոկոսային կետ: Այս աճը առավելապես պայմանավորված է «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» գործունեության տեսակի շուրջ 11.8 անգամ աճով, որի նպաստումը մշակող արդյունաբերության աճին (47.0%-ին) կազմել է 50.8 տոկոսային կետ: Ընդ որում, մշակող արդյունաբերության որոշ՝ ՀՀ տնտեսության համար էական, ենթաճյուղեր շարունակում են անկում ապրել: Այդպիսի ոլորտներից են սննդամթերքի արտադրությունը, որտեղ գրանցվել է 2.2% անկում, ծխախոտի արտադրությունը՝ 12.6%, հագուստի արտադրությունը՝ 10.1%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 10.3%: Շարունակում է անկում ապրել նաև հիմնային մետաղների արտադրությունը, որը մշակող արդյունաբերության աճին հակազդել է շուրջ 1.7 տոկոսային կետով: Այսինքն՝ մշակող արդյունաբերության համեմատաբար կայուն և երկարաժամկետ գործունեության տեսակները նվազում են, իսկ կարճաժամկետ գործունեությունն էական աճ է գրանցում՝ վատթարացնելով արդյունաբերության կառուցվածքը:


Հանքարդյունաբերության ոլորտում ցուցանիշները նույնպես բացասական են. հունվար-փետրվարին ոլորտի թողարկումը նվազել է 3.1%-ով՝ ընդհանուր արդյունաբերության աճին հակազդելով 0.7 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 8.7% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 1.6 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 7.0% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

² Արդյունաբերության մարտ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը վերջին ամիսներին արագանում է: 2024թ. մարտին շինարարության աճը կազմել է 13.1%՝ շուրջ 1.4 տոկոսային կետով արագանալով նախորդ ամսվա համեմատ: Իսկ հունվար-մարտ ամիսներին շինարարության աճը կազմել է 11.7%՝ արագանալով 0.9 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում աճի տեմպերը մնում են զգալիորեն ավելի ցածր մակարդակում, ինչպես նախորդ տարվա, այնպես էլ ընթացիկ տարվա մյուս ոլորտների աճերի հետ համեմատ: 2024թ. մարտին ծառայությունների

ոլորտի աճը կազմել է 4.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով: Կուտակային՝ հունվար-մարտ ամիսների աճը ևս որոշակիորեն դանդաղել է՝ կազմելով 5.0%:

Ծառայությունների ոլորտի աճը, ըստ հունվար-փետրվար ամսվա տվյալների³, առավելապես պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեության» ոլորտի 16.5% աճով, որի նպաստումը ոլորտի աճին կազմել է 4.6 տոկոսային կետ: Ծառայության մյուս ենթաոլորտները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից, որոնք նվազել են 15.4%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.0 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը շարունակում է արագանալ: Առևտրի ոլորտում մարտին գրանցվել է բարձր աճ՝ շուրջ 30.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.1 տոկոսային կետով: Հունվար-մարտ ամիսների կուտակային աճը կազմել է 26.5%: Առևտրի աճի տեմպի արագացումը ևս պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման գործընթացով, ինչի մասին են վկայում առևտրի կառուցվածքի ցուցանիշները, մասնավորապես այն, որ առևտրի աճը հիմնականում պայմանավորված է մեծածախ առևտրի աճով, որը հունվար-փետրվար ամիսներին⁴ կազմել է 37.7%, այն դեպքում, երբ մանրածախ առևտրի աճը եղել է 7.2%:

³ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁴ Առևտրի ոլորտի մարտի ցուցանիշները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալը մարտին աճել է գրեթե երեք անգամ: 2024թ. մարտին արտահանման աճը կազմել է 197.8% (3.0 անգամ), իսկ հունվար-մարտի կուտակային աճը՝ 171.9% (2.7 անգամ): Այս ցուցանիշները պայմանավորված են ոսկու արտահանմամբ, որն ամբողջությամբ փոխել է ՀՀ արտահանման կառուցվածքը: Արդյունքում 2024թ. մարտին արտահանման ծավալը գերազանցել է ներմուծման ծավալը: Այսպիսի երևույթ առաջին անգամ տեղի է ունեցել 2023թ. դեկտեմբերին՝ կրկին ոսկու արտահանման հետևանքով:


Հունվար-փետրվար ամիսներին «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալը կազմել է 1.8 մլրդ ԱՄՆ դոլար, որը 1.8 անգամ ավելի շատ է, քանի նախորդ տարվա հունվար-փետրվարի բոլոր ապրանքների արտահանման ծավալը (շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար):

2024թ. հունվար-փետրվար⁵ ամիսների ընթացքում արտահանման աճը գրեթե ամբողջությամբ ապահովվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի շուրջ 8.8 անգամ աճի հաշվին: Վերջինիս նպաստումը ընդհանուր արտահանման աճին կազմել է 159.1 տոկոսային կետ (որն ավելի մեծ է, քան արտահանման աճը, ինչը ևս ցույց է տալիս, որ մյուս ոլորտներում ընդհանուր առմամբ գրանցվել է անկում): Արտահանման էական աճ է գրանցվել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «մանածագործական իրեր» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի արտահանման

⁵ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ծավալներում, որոնք ընդհանուր արտահանման աճին նպաստել են համապատասխանաբար 6.7, 3.1 և 2.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «պատրաստի սննդի արտադրանք», «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալները նվազել են, որոնք միասին ընդհանուր արտահանման աճին հակազդել են 17.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը դանդաղել է՝ հիմնականում պայմանավորված բազայի էֆեկտով: Ներմուծման ծավալը 2024թ. մարտին աճել է 56.2%-ով՝ նախորդ ամսվա 100%-ի դիմաց: Աճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով, մասնավորապես՝ նախորդ տարվա մարտին ներմուծման ծավալի կտրուկ աճով (որն էլ իր հերթին պայմանավորված էր ավտոմեքենաների ներմուծման կտրուկ աճով): 2024թ. հունվար-մարտ ամիսներին ներմուծման աճը կազմել է 75.8%:

2024թ. հունվար-փետրվարի⁶ տվյալներով «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը դարձել է նաև ներմուծման աճի հիմնական ապահովողը՝ աճելով 7.3 անգամ և ներմուծման աճին նպաստելով 71.9 տոկոսային կետով: Ներմուծման աճին նշանակալի դրական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «մանածագործական իրեր» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.5, 2.2 և 1.7 տոկոսային կետ:


⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Նույն ժամանակահատվածում շուրջ 55.1%-ով նվազել է «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի ներմուծումը՝ ընդհանուր ներմուծմանը ունենալով 9.8 տոկոսային կետ բացասական նպաստում:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Անվանական աշխատավարձի աճի տեմպը դանդաղել է 2024թ.: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 8.2%-ով (հունվարի համեմատ արագացել է 1.1 տոկոսային կետով)՝ կազմելով 270,222 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.2%-ով (հունվարի համեմատ արագացել է 1.2 տոկոսային կետով)՝ կազմելով 296,606 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը շարունակել է աճել ավելի բարձր տեմպով՝ 10.5%-ով (հունվարի համեմատ արագացել է 0.7 տոկոսային կետով)՝ կազմելով 206,398 դրամ: Սակայն հաշվի առնելով, որ գնաճը հունվար-փետրվար ամիսներին բացասական է եղել, իրական աշխատավարձերի աճն ավելի բարձր է:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-փետրվարին, %



⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2024թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի փոխարժեքը համեմատաբար կայուն է եղել՝ փոքր չափով արժևորվելով գործընկեր երկրների արժույթների նկատմամբ մարտ ամսին: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ հունվար-մարտին կազմել է 403 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվելով 2.6%-ով: Եվրոյի նկատմամբ արժեզրկումը նույն ժամանակահատվածում կազմել է 3.6%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակել է մնալ արժևորված՝ շուրջ 21.6%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները


Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը որոշակիորեն արագացել է:

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-մարտին կազմել են 524.6 մլրդ դրամ՝ աճելով 8.7%-ով, ինչը նախորդ ամսվա համեմատ ավելի բարձր է՝ 0.8 տոկոսային կետով: Հարկային եկամուտների աճը նույնպես արագացել է՝ կազմելով 8.5%: Սակայն պետք է նշել, որ 2024թ. եկամուտներում ներառված են նաև հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները, մինչդեռ 2023թ. ցուցանիշներում դրանք ներառված չեն: Հետևաբար, անհրաժեշտ է 2023թ. նույնպես ճշգրտել, որպեսզի համեմատվող ցուցանիշները համադրելի դառնան: Նշված գործողությունը կատարելուց հետո, ընդհանուր եկամուտների աճը դառնում է 6.1%, իսկ հարկային եկամուտների աճը՝ 5.8%:

Ոչ հարկային եկամուտների գծով գրանցվել է 12.4% աճ, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 55.2%-ով:

Հարկ է նշել, որ 2024թ. պետական բյուջեով առաջին եռամսյակի ընդհանուր եկամուտների պլանը սահմանված է 562.2 մլրդ դրամի չափ, իսկ հարկային եկամուտներինը՝ 543.6 մլրդ դրամի չափ: Դա նշանակում է, որ ընդհանուր եկամուտները նախնական պլանի համեմատ թերակատարվել են 6.7%-ով, իսկ հարկային եկամուտները՝ 7.9%-ով: Առավել վատ է իրավիճակը պաշտոնական դրամաշնորհների մասով, քանի որ նախատեսված 2.2 մլրդ դրամից ստացվել է ընդամենը 0.4 մլրդ դրամը:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը⁸, %



⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:


Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-մարտին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 13.3%) և շահութահարկի (աճը՝ 30.1%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.8 և 2.5 տոկոսային կետ: Սակայն եթե հիպոթեքի գծով վերադարձները գումարենք 2023թ. եկամտային հարկի ցուցանիշին (այդպիսով դարձնելով համադրելի), ապա եկամտային հարկի գծով մուտքերի աճը կնվազի և կհասնի 4.0%-ի: Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գծով մուտքերը հունվար-մարտ ամիսներին նվազել են՝ ընդհանուր հարկային եկամուտների աճին հակազդելով համապատասխանաբար 0.3 և 0.5 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-մարտ		2024թ. հունվար-մարտ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	15.2	15.2	8.5	8.5
Ավելացված արժեքի հարկ	16.5	5.9	-0.8	-0.3
Ակցիզային հարկ	36.1	2.2	-7.4	-0.5
Շահութահարկ	3.2	0.3	30.1	2.5
Պետական տուրք	-47.0	-2.8	18.7	0.5
Մաքսատուրք	21.5	0.7	9.7	0.3
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	1.5	0.0	20.8	0.5
Այլ հարկեր	42.6	1.3	5.5	0.2
Շրջանառության հարկ	31.3	0.8	16.5	0.5
Եկամտային հարկ	18.1	5.1	13.3	3.8
Սոցիալական վճարումներ	48.1	1.7	20.3	0.9

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է մնալ բարձր: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-մարտ ամիսներին կազմել են 525.9 մլրդ դրամ՝ աճելով 24.4%-ով: Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 17.0%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 15.8 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծավալն աճել է բավական բարձր տեմպով՝ շուրջ 2.3 անգամ՝ հիմնականում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսերի) հաշվին: Ընդ որում, կապիտալ ծախսերի աճը կտրուկ արագացել է փետրվարից, երբ իրականացվել է շուրջ 36.7 մլրդ դրամի չափով կապիտալ ծախս, իսկ մարտին՝ կապիտալ ծախսերի ծավալը կազմել է 29.3 մլրդ դրամ (նախորդ տարվա մարտին՝ 19.2 մլրդ դրամ):

Բյուջեով նախատեսված պլանի համեմատ առաջին եռամսյակում ծախսերը նույնպես թերակատարվել են: Ընդ որում, ի տարբերություն նախորդ տարիների, այս տարվա թերակատարումը պայմանավորված է ընթացիկ ծախսերի շուրջ 15.9% թերակատարմամբ, մինչդեռ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) գերակատարվել են 35.8%-ով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




Հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեն եղել է գրեթե հաշվեկշռված՝ ձևավորելով փոքր պակասուրդ: 2024թ. մարտին, բյուջեի ծախսերը էականորեն գերազանցել են եկամուտները, ինչի արդյունքում գրանցվել է փոքր՝ 0.9 մլրդ դրամի չափով պակասուրդ: Սակայն այս դեպքում նույնպես առկա է պլանից էական շեղում, քանի որ 2024թ. առաջին եռամսյակում բյուջեով նախատեսվում էր ունենալ շուրջ 34.9 մլրդ դրամ պակասուրդ:

5.4. Պետական պարտք

2024թ. մարտին ՀՀ պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) նախորդ տարվա մարտի համեմատ աճել է 11.6%-ով՝ կազմելով 12.2 մլրդ ԱՄՆ դոլար: Կառավարության պարտքը աճել է 12.5%-ով՝ կազմելով 11.6 մլրդ ԱՄՆ դոլար, որի կազմում ներքին պարտքն (արտահայտված ՀՀ դրամով) աճել է 29.1%-ով, իսկ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով)՝ 0.9%-ով: Արտաքին պարտքի ծավալը 2023թ. դեկտեմբերի համեմատ, սակայն, նվազել է՝ 1.0%-ով:

2024թ. մարտին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2024թ. մարտին կազմել է 9.6%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա մարտի համեմատ՝ 2.0 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույնպես նվազել է՝ կազմելով 9.9% և նախորդ տարվա մարտի համեմատ նվազելով 2.1 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը շարունակում է մնալ բացասական տիրույթում: 2024թ. սկզբից գների միջին մակարդակը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Մարտին գները նվազել են 1.2%-ով, իսկ հունվար-մարտ ամիսների միջին գնանկումը ևս կազմել է 1.2%:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը մնացել է գրեթե նույն մակարդակում: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 12.1%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ ավանդների ծավալն աճել է աննշան՝ 0.5%-ով: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը հիմնականում պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 12.0% և 12.5%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. մարտին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 6.9 տոկոսային կետով:

Էական է եղել նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստումը, որը կազմել է 3.1 տոկոսային կետ: Տնտեսության այլ հատվածներից ներգրավված ավանդները նույնպես աճել են՝ ընդհանուր ավանդներին ունենալով դրական նպաստում:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: 2024թ. մարտին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 17.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 4 տոկոսային կետով: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալը նույնպես աճել է, սակայն ավելի փոքր տեմպով՝ շուրջ 0.5%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են 19.7%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 18.7 տոկոսային կետով: Մինչդեռ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը կտրուկ նվազել են՝ շուրջ 16.0%-ով, ընդհանուր վարկերի աճին հակազդելով 0.8 տոկոսային կետով: Ընդ որում, ոչ ռեզիդենտների վարկերի կրճատումը տեղի է ունեցել մարտին, երբ դրանց ծավալը փետրվարի համեմատ նվազել է 29.9%-ով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.0 և 9.8 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների շարքում գրեթե բոլոր ուղղություններով առկա է դրական դինամիկա, բացի արդյունաբերության ոլորտից: Վարկերի աճին շարունակում են էական մեծ նպաստում ունենալ հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 23.9%, իսկ նպաստման չափը՝ 5.0 տոկոսային կետ: Սակայն արագ տեմպերով աճող սպառողական վարկերը 2024թ. մարտին դարձել են ռեզիդենտներին

տրամադրվող վարկերի աճի ամենամեծ նպաստող գործոնը՝ աճելով 24.8%-ով և վարկերի աճին նպաստելով 5.4 տոկոսային կետով:

Էականորեն աճել են նաև շինարարության (աճը՝ 42.7%), ծառայությունների (աճը՝ 21.7%), առևտրի (աճը՝ 14.9%) և գյուղատնտեսության (աճը՝ 21.9%) ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները, որոնք ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 3.7, 3.5, 1.7 և 1.3 տոկոսային կետով: Արդյունաբերությանն ուղղվող վարկերի ծավալները 2022 թվականից սկսած նվազում են, իսկ 2024թ. մարտին դրանց նվազման չափը կազմել է 9.3%՝ պայմանավորված ինչպես մշակող արդյունաբերության (նվազումը՝ 12.4%), այնպես էլ հանքարդյունաբերության (նվազումը՝ 28.2%) ոլորտներում վարկավորման ծավալների նվազմամբ:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար⁹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է նվազել նաև 2024 թվականին: 2024թ. հունվար-փետրվար ամիսներին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 153.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազելով 69.4%-ով: Դրամական փոխանցումների համախառն ներհոսքը նույնպես նվազել է բավական մեծ չափով՝

⁹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

29.9%-ով, սակայն զուտ ներհոսքի անկմանը նպաստել է նաև դրամական միջոցների արտահոսքի 3.3%-ով աճը:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճը շարունակում է մնալ բավական բարձր՝ պայմանավորված լինելով, սակայն, ժամանակավոր և ոչ կայուն երևույթներով: Տնտեսական ակտիվության ցուցանիշը մարտին կազմել է 15.3%, իսկ հունվար-մարտ ամիսներին՝ 14.3%՝ առավելապես պայմանավորված լինելով ոսկերչական գործունեության ծավալների աճով: Վերջինս, սակայն, կախված է արտաքին, դժվար կանխատեսելի երևույթներից, հետևաբար կարող է կտրուկ դադարել՝ էապես փոխելով մակրոտնտեսական ցուցանիշների պատկերը:

2. Թվացյալ տնտեսական վերելքի պայմաններում իրական խնդիրները մնում են ստվերում: Վերոհիշյալ ժամանակավոր գործոնի արդյունքում տնտեսական բարձր ցուցանիշների արձանագրման վտանգներից մեկն էլ այն է, որ կարող են ստվերում մնալ տնտեսության իրական խնդիրները: Մասնավորապես, արդյունաբերության և արտահանման պատմականորեն բարձր ցուցանիշների պայմաններում և՛ արդյունաբերության, և՛ արտահանման մասով առկա են էական խնդիրներ: Անկումներ են գրանցվում այնպիսի ենթաճյուղերում, ինչպիսիք են սննդամթերքի, ծխախոտի, հագուստի, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունները, ընդ որում, անկման տեմպերը բավական բարձր են և կայուն: Սա ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսության մրցունակությունը նվազել է:

3. Հարկային եկամուտները շարունակում են աճել տնտեսության աճից դանդաղ տեմպերով: 2024թ. հունվար-մարտին հարկային եկամուտների աճը կազմել է 8.5%, իսկ համադրելիության բերելու (եկամտային հարկի վերադարձի ցուցանիշը՝ 2023թ. ցուցանիշներում ներառելու) դեպքում աճը կազմում է 5.8%: Ավելին, բյուջեով պլանավորվածի համեմատ առաջին եռամսյակի հարկային եկամուտները թերակատարվել են շուրջ 43.0 մլրդ դրամով: Այս իրավիճակը մատնանշում է այն, որ տնտեսական աճ ապահովող գործառույթները համապատասխան չափով չեն հարկվում, ինչը կարող է հանգեցնել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի անկմանը:

4. Պետական բյուջեի կատարումը ընդհանուր առմամբ էականորեն շեղվել է պլանից: 2024թ. առաջին եռամսյակում գրանցվել է նախնական պլանի համեմատ հարկային եկամուտների էական թերակատարում: Սակայն ծախսերի մասով նույնպես առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես, արձանագրվել է ընթացիկ ծախսերի թերակատարում՝ շուրջ 15.9%-ով, և կապիտալ ծախսերի գերակատարում՝ շուրջ 35.8%-ով: Իհարկե, կապիտալ ծախսերի աճը

դրական երևույթ է, եթե այն ուղղված է տնտեսության ներուժի բարձրացմանը (ինչը տվյալ պարագայում միանշանակ չէ), սակայն այն եկամուտների ցածր աճի և ընթացիկ ծախսերի թերակատարման պայմաններում կարող է վտանգավոր լինել: Միևնույն ժամանակ, ծախսերի պլանավորված մակարդակներից շեղումները նվազեցնում են բյուջետային կարգապահությունը՝ առաջացնելով հարկաբյուջետային կայունության ռիսկեր:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: